ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ՄԱԾՁԲ-4-10

ք. Երևան 27.04.2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից և «Կարկոմավտո» ՍՊԸ -ն ի դեմս ընկերության տնօրեն Ա. Շախմուրադյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող № 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի № 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: :

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (Հավելված № 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված № 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից (5) հնգօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր առավելագույն գումարը, կազմում է 3 000 000/երեք միլիոն/ ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի № 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն,

«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է՝ 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: Սույն պայմանագրի № 1, 2, 3 և 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.11 Սույն պայմանագով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՀՈՒ Սպառազինության վարչությունը :

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Կարկոմավտո» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Տիգրանյան 1, փակուղի 1
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	"Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան" ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 21700212163000 1
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01131374
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ	Տնօրեն
ԱՊԵՏՅԱՆ	ԵՍՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված N 1
ՄԱԾՁԲ-4-10 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ ԵՎ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ2 դրամ

Անվանումը	Չափման միավոր	քանակ	Առավելագույն գումար	Ծառայության մատուցումը 2018թ. 2-4-րդ եռամսյակ, մինչև 10.12.2018թ.
ՆԻՍԱՆ ՊԱՏՐՈՒԼ մակնիշի ավտոմեքենայի երաշխիքային ծառայություններ	դրամ	1	1 700 000	ըստ պատասխանատու ստորաբաժանման ներկայացրած հայտերի

	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿ	Պարբերականությունը Վազք կմ	Միավորի կողմնորոշիչ գին ՀՀ դրամ ՆԻՍԱՆ ՊԱՏՐՈՒԼ 5.6 երաշխիքային
1	ԱՓՏ յուղի փոխարինում	80,000	18600
2	ԱՓՏ յուղի զտիչի փոխարինում	0	18600
3	Շարժիչի յուղ և զտիչի փոխարինում	7,000	3672
4	Հիդրավլիկի յուղի փոխարինում	60,000	3672
5	Լամպի փոխարինում	0	2520
6	Անվադողերի փոխարինում 1 հատ	0	1224
7	Անվադողերի բալանսավորում 1 հատ	0	1224
8	Առջևի արգելակման կոճղակի փոխարինում	10,000	4896
9	Հետևի արգելակման կոճղակի փոխարինում	15,000	4896
10	Ձեռքի արգելակման կոճղակների փոխարինում	40,000	1224
11	Շարժիչի փոկի փոխարինում	50,000	4896
12	Վառելիքի զտիչի փոխարինում	30,000	18600
13	Ինժեկտորների լվացում	0	49800
14	Վառոցքի մոմի փոխարինում 1կ/տ	40,000	25200
15	Համակարգչային ախտորոշում	0	62540
16	Փականագործի աշխատանք 1ժամ	0	12240
17	Անվաբացքի կարգավորում (ռազվալ)	0	15000
18	Ավտոմեքենայի յուղման աշխատանքներ	0	2520
19	Օդի զտիչի փոխարինում	20,000	1224
20	Օդորակիչի զտիչի փոխարինում	30,000	3672
21	Բաժանարար տուփի յուղի փոխարինում	80,000	3672
22	Կառնարարդի կանգնակի փոխարինում	0	3672
23	Կառնարարի վրանների փոխարինում	0	3672
24	Վառելիքի համակարգի լվացում	0	24000
25	CO կարգավորում	0	0
26	Արգելակային սկավառակի հանում տեղադրում		6240

	Պահեստամասեր և քսայուղեր	Պարբերականությունը Վազք կմ	Երաշխիքային
1	ԱՓՏ յուղ	80,000	10200
2	Շարժիչի յուղ	7,000	6000
3	Յուղի զտիչ	7,000	5000
4	Հիդրավլիկի յուղ	60,000	12360

5	Լապտերի լամպ	0	36000
6	Լամպ	0	6000
7	Առջևի արգելակման կոճղակի	10,000	68400
8	Հետևի արգելակման կոճղակի	15,000	43800
9	Արգելակման հեղուկ	0	4944
10	Շարժիչի փոկ	50,000	36000
11	Վառելիքի մղիչ իր զտիչով	30,000	180000
12	Վառոցքի մոմ 1հատ	40,000	13800
13	Շարժիչի հովացման հեղուկ	0	4896
14	Օդի զտիչ	20,000	18600
15	Օդորակիչի զտիչ	30,000	18600
16	Բաժանարար տուփի յուղ	80,000	61800
17	Առջևի կաունարարի կանգնակ	0	15000
18	Հետևի կաունարարի կանգնակ	0	15000
19	Կաունարարի վրան առջևի	0	4896
20	Կաունարարի վրան հետևի	0	4896
21	Արգելակային սկավառակ	0	99000

Ծառայության մատուցումը՝ իրականացնել 2018թ. 2-րդ,3-րդ,և 4-րդ եռամսյակներում ըստ պատասխանատու ստորաբաժանման ներկայացված հայտերի, սակայն ոչ ուշ քան 10.12.2018թ :

Փոխված դետալների ժամանակից շուտ խափանման համար պատասխանատվություն է կրում մատուցողը:

Այլ պահանջներ - ծառայության ընթացքում օգտագործվող բոլոր տեսակի պահեստամասերի, քսայուղերի և այլ նյութերի ապահովումն իրականացվում է ծառայությունը մատուցողի կողմից:

22 դրամ

Անվանումը	Չափման միավոր	քանակ	Առավելագույն գումար	Ծառայության մատուցումը 2018թ. 2-4-րդ եռամսյակ, մինչև 10.12.2018թ.
ՇԵՎՐՈԼԵ ԿԱՊՏԻՎԱ մակնիշի ավտոմեքենայի երաշխիքային ծառայություններ	դրամ	1	1 300 000	ըստ պատասխանատու ստորաբաժանման ներկայացրած հայտերի

	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿ	Պարբերականությունը Վազք կմ	Միավորի կողմնորոշիչ գին ՀՀ դրամ ՇԵՎՐՈԼԵ ԿԱՊՏԻՎԱ երաշխիքային
1	ԱՔՏ յուղի փոխարինում	80,000	12240
2	ԱՔՏ յուղի զտիչի փոխարինում	130,000	183600
3	Շարժիչի յուղ և զտիչի փոխարինում	7,500	3627
4	Հիդրավլիկի յուղի փոխարինում	100,000	6120
5	Լամպի փոխարինում	0	3672
6	Անվադողերի փոխարինում 1 հատ	0	1224
7	Անվադողերի բալանսավորում 1 հատ	0	1224
8	Առջևի արգելակման կոճղակի փոխարինում	20,000	3672
9	Հետևի արգելակման կոճղակի փոխարինում	40,000	6120
10	Ձեռքի արգելակման կոճղակների փոխարինում	0	12240
11	Շարժիչի փոկի փոխարինում	0	8568
12	Վառելիքի զտիչի փոխարինում	0	12240
13	Ինժեկտորների լվացում	0	30600

14	Վառոցքի մոմի փոխարինում 1կ/տ	40,000	9792
15	Համակարգչային ախտորոշում	0	6120
16	Փականագործի աշխատանք 1ժամ	0	12240
17	Անվաթացքի կարգավորում (ռազվալ)	0	14688
18	Օդի զտիչի փոխարինում	20,000	1224
19	Օդորակիչի զտիչի փոխարինում	30,000	3672
20	Բաժանարար տուփի յուղի փոխարինում		3672
21	Կառնարարի կանգնակի փոխարինում	40,000	3672
22	Կառնարարի վրանների փոխարինում	40,000	8568

	Պահեստամասեր և քսայուղեր	Պարբերականությունը Վազք կմ	Երաշխիքային
1	ԱՓՏ յուղ	80,000	11200
2	ԱՓՏ յուղի զտիչ	130,000	40000
3	Շարժիչի յուղ	7,500	6000
4	Յուղի զտիչ	7,500	6000
5	Հիդրավլիկի յուղ	100,000	4896
6	Լապտերի լամպ	0	3672
7	Արգելակման լապտերի լամպ	0	600
8	Լամպ	0	1224
9	Առջևի արգելակման կոճղակի	20,000	43800
10	Հետևի արգելակման կոճղակի	40,000	37200
11	Ձեռքի արգելակման կոճղակների	0	43800
12	Արգելակման հեղուկ	10,000	4944
13	Շարժիչի փոկ	0	3720
14	Վառելիքի մղիչ իր զտիչով	0	240000
15	Վառոցքի մոմ 1հատ	40,000	7800
16	Շարժիչի հովացման հեղուկ	0	4896
17	Օդի զտիչ	20,000	15000
18	Օդորակիչի զտիչ	30,000	18600
19	Բաժանարար տուփի յուղ	80,000	1224
20	Առջևի կառնարարի կանգնակ	0	15000
21	Հետևի կառնարարի կանգնակ	0	15000
22	Կառնարարի վրան առջևի	0	4944
23	Կառնարարի վրան հետևի	0	4944

Ծառայության մատուցումը՝ իրականացնել 2018թ. 2-րդ, 3-րդ, և 4-րդ եռամսյակներում ըստ պատասխանատու ստորաբաժանման ներկայացված հայտերի, սակայն ոչ քան 10.12.2018թ :

Փոխված դետալների ժամանակից շուտ խափանման համար պատասխանատվություն է կրում մատուցողը:

Այլ պահանջներ - ծառայության ընթացքում օգտագործվող բոլոր տեսակի պահեստամասերի, քսայուղերի և այլ նյութերի ապահովումն իրականացվում է ծառայությունը մատուցողի կողմից:

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի տնօրեն

Վ. ԱՎԱԳՅԱՆ

Տնօրեն

Ա. ՍԱՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված № 2
№ ՄԱԾՁԲ-4-10 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Ծառայության անվանում	CPV-ի կոդը՝	*Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.պետական բյուջեից ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ								
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	ՆԻՍԱՆ ՊԱՏՐՈՒԼ մակնիշի ավտոմեքենաների ծառայություններ	71631260/1	560000	560000	560000	1120000	1120000	1120000	1700000	1700000	1700000
2	ՇԵՎՐՈԼԵ ԿԱՊՏԻՎԱ մակնիշի ավտոմեքենաների ծառայություններ	71631260/1	430000	430000	430000	860000	860000	860000	1300000	1300000	1300000

Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի տնօրեն
Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«Դրամամատակարարում» ՍՊԸ
Տնօրեն Շ. ՇԱՀԽԱՏՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված N 3.1
ՄԱԾՁԲ-4-10ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ——————————ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
——————————ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. —— -ին կնքված N ——————
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ———— – -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց **Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

———————————
ազգանուն, անուն

———————————
ստորագրություն

———————————
ազգանուն, անուն

———————————
ստորագրություն

CHEVROLET

To: whom it may concern

Budaörs, 10th September, 2015

CONFIRMATION

Hereby I confirm that Vekar Llc. is the official dealer of Chevrolet in Armenia.

Yours faithfully,

Georges Megyeri
Managing Director
Chevrolet Central & Eastern Europe Llc., 2040 Budaörs, Szabadság út 117

Chevrolet Central and Eastern Europe Llc.
Szabadság u. 117
H - 2040 Budaörs
Hungary

VEKAR

ՎԵԿԱՐ ՍՊԸ / VEKAR LLC
Հայաստանի Հանրապետություն
Republic of Armenia
Երևան, [illegible]

Ֆաքս՝/Fax: (+374 10) 38 06 02
www.chevrolet.am

№ [illegible]
«20» 04 2016

ՀՀ Պաշտպանության Նախարարությանը

Սույն գրությամբ «Վեկար» ՍՊԸ-ն՝ հանդիսանալով Հայաստանի Հանրապետությունում «CHEVROLET» մակնիշի ավտոմեքենաների միակ և պաշտոնական ներկայացուցիչն ու ներկրողը, լիազորում է «Կարկոմավտո» ՍՊԸ-ին մասնակցել մրցույթներին և գնման ընթացակարգերին, ներկայացնել փաստաթղթային փաթեթներ, վարել բանակցություններ, ներկայացնել գնառաջարկներ, ստորագրել և ստանալ փաստաթղթեր, ներկայացնել դիմումներ ու տալ բացատրություններ, ինչպես նաև իրականացնել 18.12.2015թ.-ին կնքված թիվ ԲԸԱՀԱՊՁԲ-4-27-1 պայմանագրով ՀՀ ՊՆ-ին վաճառված «CHEVROLET CAPTIVA 3.0» մակնիշի ավտոմեքենաների երաշխիքային և ետերաշխիքային սպասարկումը:

Գլխավոր Տնօրեն Աշոտ Շախմուրադյան

NISSAN

NISSAN MIDDLE EAST FZE
P.O. Box 61111, Jebel Ali
Dubai, United Arab Emirates
www.nissan-me.com

Date : 09-Sep-2014
Ref : NME-MED-F004/14

To Whomsoever It May Concern

We, Nissan Middle East FZE, having our registered office at P.O. Box 61111 Jebel Ali Free Zone, Dubai, U.A.E. ("NMEF"), a one hundred percent subsidiary of Nissan Motor Co. Ltd, having its registered office at No.2 Takara-cho, Kanagawa-ku, Yokohama, Japan, ("NML"), and as an intermediary of NML, responsible for Nissan vehicles sales in the territory of GCC, Middle East and CIS, including Armenia, hereby confirm the following:

1. Muran Co. Ltd ("Muran"), having its registered office at 1st Blind Alley of Tigranyan Str, 0014 Yerevan, Armenia, which is - pursuant to the terms of a distribution agreement between NML and Muran dated 21 April, 2005 - an authorized distributor of Nissan branded vehicles for importation, distribution and after sales services operations of Nissan vehicles in the territory of Armenia.

This letter has been issued at the request of Muran and is valid until March 31st 2019, unless otherwise notified by NMEF.

This is for your information and reference.

Sincerely,

NISSAN MIDDLE EAST FZE
P.O. BOX : 61111
Jebel Ali, Free Zone
Dubai - U.A.E.
Tel : 00971 4 8817500
Fax: 00971 4 8819707

SEPT 9, 14

Rolando M. Gutierrez
Head of Med Sales & Market Management
NISSAN MIDDLE EAST FZE

«ՄՈՒՐԱՆ» ՍՊԸ "MURAN" LLC

47 Komitas Ave., Yerevan 0051
Հեռ./Tel.: (+37410) 249914 (ընդ./rep), 231118
Ֆաքս/Fax: (+37410) 280350
էլ. փոստ/e-mail: nissansales@autogroup.am
www.nissan.am

№
"28" 04 2016

ՀՀ Պաշտպանության Նախարարությանը

Սույն գրությամբ «Մուրան» ՍՊԸ-ն՝ հանդիսանալով Հայաստանի Հանրապետությունում «NISSAN» մակնիշի ավտոմեքենաների միակ և պաշտոնական ներկայացուցիչն ու ներկրողը, լիազորում է «Կարկոմավտո» ՍՊԸ-ին մասնակցել մրցույթներին և գնման ընթացակարգերին, ներկայացնել փաստաթղթային փաթեթներ, վարել բանակցություններ, ներկայացնել գնառաջարկներ, ստորագրել ու ստանալ փաստաթղթեր, ներկայացնել դիմումներ ու տալ բացատրություններ, ինչպես նաև իրականացնել 18.12.2015թ.-ին կնքված թիվ ԲԸԱՀԱՊՁԲ-4-27-1 պայմանագրով ՀՀ ՊՆ-ին վաճառված «NISSAN PATROL5.6» մակնիշի ավտոմեքենաների երաշխիքային և ետերաշխիքային սպասարկումը:

Գլխավոր Տնօրեն Աշոտ Շախմուրադյան

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ No 000009

ք. Երևան «18» 12 2015 թ.

«Վեկար» ՍՊԸ-ն, ի դեմս Գ. Ավետիսյանի, որը գործում է ընկերության գլխավոր տնօրենի կողմից տրված լիազորագրի հիման վրա, այսուհետ՝ Վաճառող, մի կողմից, և Յուպիտեր ՀԼՍ, ի դեմս Ա. Շարեմազյանի, որը գործում է հիման վրա, այսուհետ՝ Գնորդ, մյուս կողմից, հետագա առանձին հիշատակման դեպքում՝ «Կողմ», իսկ միասին հիշատակման դեպքում՝ «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը պարտավորվում է ձեռք բերել և Գնորդին ի սեփականություն հանձնել գործարանային արտադրության Chevrolet Captiva LTZ մակնիշի թվով 1 հատ, սև գույնի ավտոմեքենա, ինչպես նաև Գնորդի պատվերով և ներկայացմամբ անձամբ կամ երրորդ անձի միջոցով այն լրացուցիչ կոմպլեկտավորել — — — (այսուհետ՝ Ապրանք), սույն պայմանագրի ստորագրման օրվանից հետո (101 օրա) աշխատանքային օրվա ընթացքում, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքը, վճարել դրա համար՝ սույն պայմանագրով նախատեսված չափով, կարգով և ժամկետներում: Եթե սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո Գնորդը չի վճարում՝ պայմանագրի 2.2. կետում նախատեսված չափով և ժամկետում, ապա Վաճառողն իրավունք ունի միակողմանիորեն լուծել սույն պայմանագիրը, սակայն եթե վերջինս չի լուծում այն, ապա Կողմերը սույն կետով պայմանավորվում և հաստատում են, որ Ապրանքի հանձնման ժամկետը հետաձգվում է Գնորդի կողմից նախնական վճարի վճարման ուշացված օրերի քանակին համապատասխան: Ապրանքը հանձնվելու է Վաճառողի փաստացի գտնվելու վայրում՝ այսուհետ «Հանձնման վայր»:

2. Պայմանագրի գինը և վճարման կարգը

2.1. Պայմանագրի գինը կազմում է 17200000 (տասնչորս միլիոն երկու հարյուր հազար) դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:
2.2. Սույն պայմանագրի 2.1. կետում նախատեսված գումարի 100 (հարյուր)%-ը (տասնչորս միլիոն երկու հարյուր հազար) դրամ/ Գնորդը պարտավոր է վճարել սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 3 (երեք) բանկային օրվա ընթացքում, իսկ մնացած մասը՝ Ապրանքի հանձնման-ընդունման նույն օրը՝ բանկային փոխանցման կամ կանխիկ վճարման տեսքով:
2.3.Վճարվելիք գումարների անբավարարության դեպքում, փաստացի ստացված գումարներից դրամական պարտավորությունների մարման հերթականությունը որոշվելու է Վաճառողի կողմից:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Վաճառողը պարտավոր է.
3.1.1. Հանձնել Գնորդին սույն պայմանագրի պայմաններին համապատասխանող Ապրանք՝ Կողմերի կողմից հաշիվ-ապրանքագրի ստորագրելու պահին,
3.1.2. կատարել Ապրանքի արտահանման և ներմուծման հետ կապված բոլոր մաքսային ձևակերպումները, որոնց կատարման ժամկետը չի ներառվում սույն պայմանագրի 1.1. կետում նախատեսված Ապրանքի հանձնման ժամկետում:
3.2. Վաճառողն իրավունք ունի.
3.2.1. Գնորդի կողմից Ապրանքն ընդունելու պարտականությունը չկատարելու դեպքում (սույն պայմանագրի 1.1. կետում նշված ժամկետը լրանալուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում Ապրանքը ստանալու համար չներկայանալու դեպքում) Վաճառողն իրավունք է ստանում հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց, միակողմանիորեն լուծել այն և Ապրանքը վաճառել երրորդ անձի, բացառությամբ այն դեպքերի, երբ Գնորդի չներկայանալու համար առկա են հարգելի պատճառներ, որոնց մասին վերջինս նախապես գրավոր ձևով տեղեկացրել է Վաճառողին,
3.2.2. Պահանջել, որպեսզի Գնորդը սույն պայմանագրով նախատեսված կարգով և չափով վճարի Ապրանքի համար, պատշաճ ձևով ընդունի այն հանձնման վայրում, իսկ նշված պայմաններից թեկուզ մեկի խախտման դեպքում՝ պահանջել սույն պայմանագրով նախատեսված տույժի և տուգանքի վճարում, ինչպես նաև միակողմանիորեն լուծել պայմանագիրը՝ Գնորդից պահանջելով նաև կրած վնասների փոխհատուցում,
3.3. Գնորդը պարտավոր է.
3.3.1. վճարել Ապրանքի դիմաց սույն պայմանագրի 2.2. կետում նախատեսված կարգով և ժամկետներում,
3.3.2. ընդունել Ապրանքը սույն պայմանագրով նախատեսված ժամկետում՝ ստորագրելով հաշիվ-ապրանքագիրը:
3.4. Գնորդն իրավունք ունի.
3.4.1. Պահանջել, որպեսզի Վաճառողն իրեն հանձնի սույն պայմանագրի 1.1. կետում նշված, երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանքը՝ սույն պայմանագրով որոշված ժամկետում, որը պետք է համապատասխանի արտադրող գործարանի դրակի և կոմպլեկտավորվածության չափանիշներին,
3.5. Ապրանքի սեփականության իրավունքը և Ապրանքի պատահական կորստի կամ պատահական վնասվածքի ռիսկն անցնում են Գնորդին՝ Ապրանքի հանձնման մասին հաշիվ-ապրանքագրի ստորագրման կամ Ապրանքի փաստացի հանձնման-ընդունման պահից:

4. Ապրանքի երաշխիքային սպասարկումը

4.1.Վաճառողը՝ սույն պայմանագրին կից թիվ 1 հավելվածի պայմաններին համապատասխան, պարտավորվում է կատարել Ապրանքի (միայն՝ շասսիի, դուռ/դռան և նեղ դուռ, գլխարկի) հետագա երաշխիքային սպասարկումը՝ Ապրանքի հանձնման պահից հետո 31 (երեսուն մեկ) տարի կամ մինչև 100.000 (հարյուր հազար) կմ վազք՝ (որն ավելի շուտ վրա կհասնի) պայմանով, որ Ապրանքի տեխնիկական սպասարկումն իրականացվի Վաճառողի տեխնիկական սպասարկման կայանում՝ SU թիվ 1 (5000 կմ վազքի դեպքում) և SU թիվ 2 (10000/15000 կմ վազքի դեպքում), ընդ որում՝ սպասարկման ծառայությունների համար Գնորդը վճարում է լրացուցիչ՝ Վաճառողի գնացուցակին համապատասխան, ինչը չի մտնում սույն պայմանագրի գնի մեջ:
4.2.Ապրանքի երաշխիքային սպասարկումն իրականացնելիս Վաճառողի տեխնիկական սպասարկման կայան Ապրանքի տեղափոխման պարտականությունն իրականացվում է Գնորդի կողմից:
4.3. Եթե Գնորդը Ապրանքի տեխնիկական սպասարկումը չի իրականացնում Վաճառողի տեխնիկական սպասարկման կայանում սույն պայմանագրի 4.1. կետի համաձայն, կամ կատարում է Ապրանքի տեխնիկական փոփոխություններ կամ գործարանային որևէ համակարգի փոփոխություն, ապա Վաճառողն ազատվում է սույն պայմանագրի 4.1. կետով նախատեսված երաշխիքային սպասակում իրականացնելու պարտականությունից:

144596

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ No 000029

ք. Երևան «21» 12 2015թ.

«Տոպալ Է» ՍՊԸ-ն, ի դեմս Գ. Գևորգյանի-ի, որը գործում է ընկերության գլխավոր տնօրենի կողմից տրված լիազորագրի հիման վրա, այսուհետ՝ Վաճառող, մի կողմից, և «Գարեգնաբերդ 21» ՀՁ, ի դեմս ԱՁ՝ Գ. Գարեգնաբերդյանի որը գործում է _____ հիման վրա, այսուհետ՝ Գնորդ, մյուս կողմից, հետագա առանձին հիշատակման դեպքում՝ «Կողմ», իսկ միասին հիշատակման դեպքում՝ «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը պարտավորվում է ձեռք բերել և Գնորդին ի սեփականություն հանձնել գործարանային արտադրության Nissan Patrol SE T3 P/UP 2015 մակնիշի թվով 1 հատ, LSDIR գույնի ավտոմեքենա, ինչպես նաև Գնորդի պատվերով և ներկայացմամբ անձամբ կամ երրորդ անձի միջոցով այն լրացուցիչ կոմպլեկտավորել _____ (այսուհետ՝ Ապրանք), սույն պայմանագրի ստորագրման օրվանից հետո 31 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքը, վճարել դրա համար՝ սույն պայմանագրով նախատեսված չափով, կարգով և ժամկետներում: Եթե սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո Գնորդը չի վճարում՝ պայմանագրի 2.2. կետում նախատեսված չափով և ժամկետում, ապա Վաճառողն իրավունք ունի միակողմանիորեն լուծել սույն պայմանագիրը, սակայն եթե վերջինս չի լուծում այն, ապա Կողմերը սույն կետով պայմանավորվում և հաստատում են, որ Ապրանքի հանձնման ժամկետը հետաձգվում է Գնորդի կողմից նախնական վճարի վճարման ուշացված օրերի քանակին համապատասխան: Ապրանքը հանձնվելու է Վաճառողի փաստացի գտնվելու վայրում՝ այսուհետ «Հանձնման վայր»:

2. Պայմանագրի գինը և վճարման կարգը

2.1. Պայմանագրի գինը կազմում է 34.000.000 (երեսունչորս միլիոն) դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

2.2. Սույն պայմանագրի 2.1. կետում նախատեսված գումարի 1 (մեկ) 100 %-ը՝ 1 (մեկ) դրամ՝ Գնորդը պարտավոր է վճարել սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 3 (երեք) բանկային օրվա ընթացքում, իսկ մնացած մասը՝ Ապրանքի հանձնման-ընդունման նույն օրը՝ բանկային փոխանցման կամ կանխիկ վճարման տեսքով:

2.3.Վճարվելիք գումարների անբավարարության դեպքում, փաստացի ստացված գումարներից դրամական պարտավորությունների մարման հերթականությունը որոշվելու է Վաճառողի կողմից:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Վաճառողը պարտավոր է.

3.1.1. Հանձնել Գնորդին սույն պայմանագրի պայմաններին համապատասխանող Ապրանք՝ Կողմերի կողմից հաշիվ-ապրանքագրի ստորագրելու պահին,

3.1.2. կատարել Ապրանքի արտահանման և ներմուծման հետ կապված բոլոր մաքսային ձևակերպումները, որոնց կատարման ժամկետը չի ներառվում սույն պայմանագրի 1.1. կետում նախատեսված Ապրանքի հանձնման ժամկետում:

3.2. Վաճառողն իրավունք ունի.

3.2.1. Գնորդի կողմից Ապրանքն ընդունելու պարտականությունը չկատարելու դեպքում (սույն պայմանագրի 1.1. կետում նշված ժամկետը լրանալուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում Ապրանքը ստանալու համար չներկայանալու դեպքում) Վաճառողն իրավունք է ստանում հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց, միակողմանիորեն լուծել այն և Ապրանքը վաճառել երրորդ անձի, բացառությամբ այն դեպքերի, երբ Գնորդի չներկայանալու համար առկա են հարգելի պատճառներ, որոնց մասին վերջինս նախապես գրավոր ձևով տեղեկացրել է Վաճառողին,

3.2.2. Պահանջել, որպեսզի Գնորդը սույն պայմանագրով նախատեսված կարգով և չափով վճարի Ապրանքի համար, պատշաճ ձևով ընդունի այն հանձնման վայրում, իսկ նշված պայմաններից թեկուզ մեկի խախտման դեպքում՝ պահանջել սույն պայմանագրով նախատեսված տույժի և տուգանքի վճարում, ինչպես նաև միակողմանիորեն լուծել պայմանագիրը՝ Գնորդից պահանջելով նաև կրած վնասների փոխհատուցում,

3.3. Գնորդը պարտավոր է.

3.3.1. վճարել Ապրանքի դիմաց սույն պայմանագրի 2.2. կետում նախատեսված կարգով և ժամկետներում,

3.3.2. ընդունել Ապրանքը սույն պայմանագրով նախատեսված ժամկետում՝ ստորագրելով հաշիվ-ապրանքագիրը:

3.4. Գնորդն իրավունք ունի.

3.4.1. Պահանջել, որպեսզի Վաճառողն իրեն հանձնի սույն պայմանագրի 1.1. կետում նշված, երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանքը՝ սույն պայմանագրով որոշված ժամկետում, որը պետք է համապատասխանի արտադրող գործարանի որակի և կոմպլեկտավորվածության չափանիշներին,

3.5. Ապրանքի սեփականության իրավունքը և Ապրանքի պատահական կորստի կամ պատահական վնասվածքի ռիսկն անցնում են Գնորդին՝ Ապրանքի հանձնման մասին հաշիվ-ապրանքագրի ստորագրման կամ Ապրանքի փաստացի հանձնման-ընդունման պահից:

4. Ապրանքի երաշխիքային սպասարկումը

4.1.Վաճառողը՝ սույն պայմանագրին կից թիվ 1 հավելվածի պայմաններին համապատասխան, պարտավորվում է կատարել Ապրանքի (միայն՝ հանձնման ստորագրվելուն և ներգրանցվելուց հետո) հետագա երաշխիքային սպասարկումը՝ Ապրանքի հանձնման պահից հետո 3 (երեք) տարի կամ մինչև 100.000 (հարյուր հազար) կմ վազք՝ (որն ավելի շուտ վրա կհասնի) պայմանով, որ Ապրանքի տեխնիկական սպասարկումն իրականացվի Վաճառողի տեխնիկական սպասարկման կայանում՝ SU թիվ 1 (2.000 կմ վազքի դեպքում) և SU թիվ 2 (16.000 24.000 կմ վազքի դեպքում), ընդ որում՝ սարքավորումների արտադրանքի համար Գնորդը վճարում է լրացուցիչ՝ Վաճառողի գնացուցակին համապատասխան, ինչը չի մտնում սույն պայմանագրի գնի մեջ:

4.2.Ապրանքի երաշխիքային սպասարկումն իրականացնելիս Վաճառողի տեխնիկական սպասարկման կայան Ապրանքի տեղափոխման պարտականությունն իրականացվում է Գնորդի կողմից:

4.3. Եթե Գնորդը Ապրանքի տեխնիկական սպասարկումը չի իրականացնում Վաճառողի տեխնիկական սպասարկման կայանում սույն պայմանագրի 4.1. կետի համաձայն, կամ կատարում է Ապրանքի տեխնիկական փոփոխություններ կամ գործարանային որևէ համակարգի փոփոխություն, ապա Վաճառողն ազատվում է սույն պայմանագրի 4.1. կետով նախատեսված երաշխիքային սպասարկում իրականացնելու պարտականությունից:

4.4. Սույն պայմանագրի 4.1. կետում նշված պայմաններով Ապրանքի երաշխիքային սպասարկման ժամանակ թերությունների հայտնաբերման դեպքում, առանձին մեխանիզմի փոխարինումից կամ վերանորոգումից հետո տվյալ մեխանիզմի երաշխիքային սպասարկման ժամկետը ներառնվում է 4.1. կետում նշված Ապրանքի ընդհանուր երաշխիքային սպասարկման ժամկետի և պայմանների մեջ: 4.1. կետում նշված կոնկրետ տարրերի գործարանային թերությունների հետ կապված պահանջները Գնորդը կարող է ներկայացնել բացառապես մինչև երաշխիքային ժամկետի ավարտը, իսկ երաշխիքում չներառված Ապրանքի մնացած բոլոր տարրերի հնարավոր գործարանային թերությունների վերաբերյալ, Գնորդն իրավունք ունի պահանջներ ներկայացնել Ապրանքը ստանալուց հետո եռօրյա ժամկետում:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրի 1.1. կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում, Գնորդն իրավունք ունի Վաճառողից պահանջել տույժ՝ յուրաքանչյուր ուշացրած օրվա համար վճարված գումարի 0.2%-ի չափով, բայց ոչ ավելի, քան 25 (քսանհինգ) օրվա համար:

5.2. Սույն պայմանագրի 2.2. կետով նախատեսված ժամկետներից յուրաքանչյուրի խախտման դեպքում՝ Վաճառողն իրավունք ունի Գնորդից պահանջել միանվագ տուգանք՝ վճարման ենթակա գումարի 10%-ի չափով, ինչպես նաև տույժ՝ ուշացված յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0.2%-ի չափով, բայց ոչ ավելի, քան 25 (քսանհինգ) օրվա համար:

5.3. Մինչև Ապրանքը Վաճառողի կողմից գործարանից ձեռք բերելը, դրա գինը 3 (երեք) կամ ավելի տոկոսով փոփոխվելու դեպքում՝ Ապրանքի գնի վերանայման և սույն պայմանագրի կատարման հետագա կարգը որոշվում է Կողմերի միջև բանակցությունների միջոցով:

5.4. Պայմանագրի գինը ենթակա է փոփոխության, կապված Ապրանքի գինը պայմանավորող ցուցանիշներից մեկի փոխության հետ, այսինքն, սահմանվում է գնի վերանայման հետևյալ եղանակը. եթե պայմանագիրը կնքելուց հետո մինչև Գնորդի կողմից Ապրանքի համար ամբողջությամբ վճարումը ԱՄՆ դոլարի փոխարժեքն աճել է 1.03 (մեկ ամբողջ երեք հարյուրերորդական) և(կամ) ավելի անգամ՝ պայմանագրի կնքման օրվա դրությամբ ԱՄՆ դոլարի վաճառքի փոխարժեքի նկատմամբ, ապա պայմանագրի գինը փոփոխվելու է նույնքան անգամ: Ընդ որում, Գնորդը պարտավոր է կատարել լրավճար պայմանագրի գնի համապատասխան փոփոխության չափով՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված ԱՄՆ դոլարի հաշվարկային փոխարժեքը:

5.5. Պայմանագրի էական պայմանների և ՀՀ օրենսդրության խախտմամբ պայմանագրի կատարումից միակողմանիորէ հրաժարվելու կամ դրա վաղաժամկետ անհիմն լուծման դեպքում, Կողմը՝ մյուս Կողմին, վճարում է տուգանք՝ Ապրանքի գնի 10 (տասը) տոկոսի չափով: Սույն պայմանագրով նախատեսված տույժերի և տուգանքների վճարումը Կողմին չի ազատում մյուս Կողմին պատճառված ողջ վնասի հատուցման պարտավորությունից:

5.6. Գնորդը տեղեկացվել և ընդունում է իր վրա պատվիրված լրացուցիչ կոմպլեկտավորման պարագաների հետագա շահագործման ընթացքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված ողջ պատասխանատվությունը:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-մաժոր)

6.1. Ֆորս-մաժորային հանգամանքների ի հայտ գալու դեպքում Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար: Ֆորս-մաժորային հանգամանքներ են համարվում. տարերային աղետները, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, հանրապետական կամ այլ ճանապարհների անանցանելիությունը, Ապրանքն արտադրող գործարանում անկանխատեսելի պատճառներով Ապրանքի արտադրության կամ դրա բարձման ժամանակավոր դադարեցումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական և այլ մարմինների ակտերը, պետական սահմանների փակումը և արտակարգ ու անկանխելի այլ հանգամանքներ, որոնք Կողմը չէր կանխատեսել և չէր էլ կարող ողջամտորեն կանխատեսել: Կողմը, որի համար ստեղծվել է Ֆորս-մաժորային իրավիճակ, պարտավորվում է հնարավորինս սեղմ և ողջամիտ ժամկետում տեղեկացնել մյուս Կողմին այդ հանգամանքների վրա հասնելու մասին:

6.2. Եթե Ֆորս-մաժորային հանգամանքների և դրանց հետևանքների ժամանակահատվածը 3 (երեք) ամսից ավելի է տևում, ապա պայմանագրի կատարման հետագա ընթացքը որոշվում է Կողմերի երկուստեք համաձայնությամբ՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Կողմերը՝ մինչև Ապրանքի հանձնում-ընդունումը, կարող են կնքել՝ սույն պայմանագրին կից, Ապրանքի ի պահ հանձնման պայմանագիր (արձանագրություն), որի համաձայն. Ապրանքի պատահական կորստի կամ վնասվածքի, ինչպես նաև երրորդ անձանց պատճառված վնասի համար պատասխանատվությունը՝ պահատվության ողջ ընթացքում, կրելու է Գնորդը (տվյալ դեպքում Պահառուն),

7.2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի կամ նրանց ներկայացուցիչների կողմից ստորագրման և կնքման կամ Գնորդին կամ նրա ներկայացուցչին Ապրանքը փաստացի հանձնելու պահից, գործում է մինչև լրիվ կատարումը:

7.3. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում կատարվում է գրավոր ձևով և ուժի մեջ է մտնում կողմերի կողմից ստորագրման պահից:

7.4. Սույն պայմանագրի հետ կապված բոլոր վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով կամ դատական կարգով:

7.5. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երեք հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակներից, որոնցից երկուսը տրվում է Վաճառողին, մեկը՝ Գնորդին:

8. Կողմերի իրավաբանական հասցեները

ՎԱՃԱՌՈՂ	ԳՆՈՐԴ
«Հերան» ՍՊԸ	ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
ք. Երևան, Դավթաշեն 47	ք. Երևան, Դավթաշեն 47
Լիազոր անձ	Հ.Հ.
Կատարող՝	
(պաշտոն, անուն, ազգանուն)	